

Հարգելի պարոն նախարար,

Ուսումնասիրելով ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղադրված (18.11.2014թ.) «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ), անհրաժեշտ ենք համարում Ձեզ ներկայացնել մեր դիտողություններն ու առաջարկությունները նշյալ նախագծի վերաբերյալ:

Նախևառաջ, ողջունելի է, որ սույն օրենքի նախագիծը վերջապես ամբողջական տեսքի բերվեց և հաշվի առնվեցին տարիներ շարունակ հասարակական կազմակերպություններիս կողմից բարձրացված բոլոր մտահոգություններն ու առաջարկությունները: Սակայն ցանկալի է, որպեսզի ՀՀ արդարադատության նախարարությունը սույն նախագծի հետ միասին իր կայքում տեղադրի նաև ՀՀ կառավարության անդամներից և շահագրգիռ հասարակությունից ստացված կարծիքները:

Օգտվելով աթիթից, մեր կազմակերպության անունից ներկայացնում ենք մեր դիտողություններն ու առաջարկությունները սույն օրենքի նախագծի վերաբերյալ.

- 1) **Հոդված 3-րդ 2-րդ մաս** – նախադասությունը թերի է և հասկանալի չէ, ցանկալի է վերախմբագրել
- 2) **Հոդված 4-րդ** – լրացնել՝ «ոչ քաղաքականացված/կուսակցականացված» բառակապակցությունը
- 3) **Հոդված 5-րդ 8-րդ մաս** - նախադասությունը թերի է և հասկանալի չէ, ցանկալի է վերախմբագրել
- 4) **Հոդված 6-րդ** – իսկ իրավաբանական անձանց գործունեության հասցեի փոփոխության վերաբերյալ, պետք է արդյո՞ք տեղեկացնել լիազոր մարմնին, թե՞ ոչ, եթե այո, ապա այդ մասին պետք է նախատեսել սույն օրենքում
- 5) **Հոդված 8-րդ 1-ին մաս** - «Կազմակերպությունը կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից»: Սակայն հարց է առաջանում, իսկ ի՞նչ կարգով հասարակական

կազմակերպությունը կարող է դառնալ առևտրային կազմակերպության մասնակից, այս կապակցությամբ անհրաժեշտ է մանրամասնել: Կարծում ենք, որ սա իրավակարգավորման ենթակա հարց է և մասնակից դառնալու գործընթացը պետք է պարզ և մատչելի դառնա հասարակական կազմակերպություններիս համար: Ճիշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ նույն ձևակերպումը տրված է, բայց իրավակարգավորումը բացակայում է, թե ինչպե՞ս և ի՞նչ կարգով կարող են մասնակից դառնալ կամ ի՞նչ հարկային պարտավորություններ ունեն:

- 6) **Հոդված 8-րդ 3-րդ մաս** – նախատեսության մեջ օգտագործվում է «*օրենքով նախատեսված*», «*օրենքով սահմանված*» և «*ՀՀ օրենսդրությամբ*» բառակապակցությունները: Ճիշտ կլինի մեկ անգամ օգտագործել դրանցից մեկը: Բացի այդ, այս մասում նշվում է, որ «*...ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին չի ազատում առանձնացված հաշվառում վարելու և ... պարտականությունից*», սակայն հարց է առաջանում՝ իսկ նրա մասնակից դառնալու դեպքում, ինչպե՞ս է այս հարցը կարգավորվելու (տես՝ վերոնշյալ 5-րդ կետը):
- 7) **Հոդված 10-րդ 4-րդ մաս** – Հարց է առաջանում, իսկ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կարո՞ղ են, եթե այո, ապա նշել այդ մասին: Բացի այդ, մեզ մոտ հարց է առաջացել, իսկ ազատագրկման վայրերում ազատագրկվածները կարող են լինել հասարակական կազմակերպության անդամ (բացառությամբ՝ գործադիր մարմնի), թե՞ ոչ, եթե՞ ոչ, ապա ինչու՞, եթե այո, ապա ի՞նչ կարգով: Ըստ իս՝ ազատագրկված անձանց քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող հարցերը չեն կարող սահմանափակվել և չեն սահմանափակվում՝ ո՛չ օրենքով, ո՛չ Մահմանադրությամբ: Սա կարևոր հարց է, որի վերաբերյալ ցանկալի կլիներ ստանալ նաև նախարարության դիրքորոշումը:
- 8) **Հոդված 13-րդ 1-ին մասի 8-րդ ենթակետ** – արդյո՞ք առևտրային կազմակերպության մասնակից լինելու մասին տեղեկություն չպետք է լինի, սա ևս կարևոր տեղեկություն է և հնարավոր է, որ հասարակական կազմակերպությունը լինի ... մասնակից

- 9) **Հոդված 16-րդ 1-ին և 2-րդ մասեր** – Հասարակական կազմակերպության կողմից դատարան դիմելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ է լինելու նաև առաջնորդվել այլ օրենքներով, մասնավորապես ՀՀ քաղաքացիական, քրեական, վարչական դատավարությունների օրենսգրքերով, հետևաբար պետք է այդ օրենսգրքերում ևս ամրագրել այդ իրավունքը, որպեսզի դատական պրակտիկայում խնդիրներ չառաջանան, ինչն այսօր մենք ունենք՝ դատական ակտերով ճանաչվում ենք՝ ոչ պատշաճ հայցվորներ: Առաջարկում ենք սույն օրենքի նախագիծը ներկայացնել փաթեթային տեսքով, ներառյալ այդ օրենսգրքերում կատարվող համապատասխան լրացումները ևս:
- 10) **Հոդված 16-րդ 5-րդ մաս** - *«Սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված...»*: Ուղղել սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը 3-րդ և 4-րդ մասեր չունի, հավանաբար 1-ին մաս պետք է լինի:
- 11) **Հոդված 16-րդ 6-րդ մաս** - *«Կամավորներ ներգրավելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ»*: Այս կապակցությամբ ևս պետք է օրենսդրական առաջարկությունների փաթեթում ներառել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, պետք է այնտեղ համապատասխան դրույթ նախատեսել, որ կամավոր աշխատանքը անօրինական աշխատանք չի համարվում: Այս դրույթի բացակայության պատճառով այսօր հասարակական կազմակերպություններս կանգնում ենք փաստի առաջ: Ավելին, սույն օրենքի նախագծում պետք է նախատեսել առանձին գլուխ կամ հոդված՝ կամավորների մասին, ինչը բացակայում է:
- 12) **Հոդված 17-րդ 1-ին մասի 7-րդ ենթակետ** - *«Կազմակերպության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում օրենքով սահմանված կարգով դիմել գործակալություն»*: Օրենքի նախագծում օգտագործվում է «լիազոր մարմին» բառակապակցությունը, իսկ այստեղ՝ «գործակալություն»: (1) Ցանկալի է կամ օրենքի նախագծի ընդհանուր մասում ամրագրել նոր հոդված, որով սահմանել օրենքում օգտագործվող բառերի հասկացությունները, թե ո՞րն է լիազոր մարմինը, ո՞րը՝

գործակալությունը և մնացած այլ կարևոր բառերը ևս: (2) Այստեղ պետք է նշել, ինչպե՞ս, ի՞նչ կարգով և ժամկետում պետք է դիմել:

- 13) **Հոդված 17-րդ 3-րդ մաս** – Կարծում ենք իմաստ չկա նշել այս մասին, եթե նշվի, ապա ՀՀ այլ օրենքներում ևս պետք է սահմանել: Արդեն հասկանալի է, որ ի շահ Կազմակերպության պետք է գործեն:
- 14) **Հոդված 18-րդ 2-րդ մաս** - նախադասությունը հասկանալի չէ, ցանկալի է վերախմբագրել
- 15) **Հոդված 19-րդ 13-րդ մաս** - *«Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը (նիստերը վարողը) և քարտուղարը, իսկ հաստատում է՝ գործադիր մարմինը կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարը»:* Հարց՝ ինչու՞ պետք է հաստատի գործադիր մարմինը, եթե Ժողովը համարվում է բարձրագույն մարմին, իսկ եթե գործադիր մարմինը չի հաստատում, ապա ինչպե՞ս է այդ հարցը լուծվում, արդյո՞ք Ժողովի արձանագրությունն անվավեր է ճանաչվում, եթե այո, ապա հստակեցնել այս մասը: Մեր կարծիքով, չպետք է բյուրոկրատական մոտեցման ձև լինի, առաջարկում ենք հանել այդ դրույթը:
- 16) **Հոդված 19-րդ 14-րդ մաս** - *«Եթե ժողովը գումարվում է հեռակա կարգով, ... փաստաթղթերը էլնում է այն ստորագրող անձից (անձանցից)»:* Առաջարկում ենք «անձից» (անձանցից) բառերից հետո լրացնել «շահերից» բառը: Բայց մեզ մոտ հարց է առաջանում՝ իսկ ո՞ր դեպքերում և ո՞ր հարցերի շուրջ կարող են հեռակա/առցանց ժողով գումարել, ենթադրվում է, որ հասարակական կազմակերպությունն իր կանոնադրությամբ պետք է սահմանեն այդ մասին, ուստի պետք է նշել այդ մասին, բացառությամբ այն դեպքերի, որոնք կվերաբերեն կազմակերպության գործադիր մարմնի կամ աշխատողի աշխատանքից հեռացնելու հետ կապված (կադրային) հարցերին, սրանք այն հարցերն են, որոնք չպետք է առցանց քննարկվեն:
- 17) **Հոդված 19-րդ 15-րդ մաս** - *«...5 տարուց պակաս լինելը»* բառակապացությունը փոխել «...3 տարուց», քանի որ օրենքի նախագծի այլ հոդվածներում փաստաթղթերի հետ կապված սահմանվում է 3 տարի կամ ընդհանուր սահմանել 5 տարի, չնայած, 3 տարին ավելի ողջամիտ ժամկետ է:
- 18) **Հոդված 19-րդ 16-րդ մաս** – *«Եթե Կազմակերպությունն ունի պաշտոնական ինտերնետային կայք, ապա Ժողովի աշխատանքներն ավարտվելուց հետո՝ 5*

աշխատանքային օրվա ընթացքում ժողովի արձանագրությունները, այդ թվում՝ որոշումները հրապարակվում են կայքում»: Առաջարկում ենք լրացնել՝ «բացառությամբ առևտրային, բանկային և անձնական տվյալներ»:

- 19) **Հոդված 22-րդ 4-րդ մաս** - *«Գործադիր մարմնի՝ սույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կամ 8-րդ կետով սահմանված լիազորությունը ...»:* Ուղղել այն՝ սույն հոդվածի 3-րդ մասը չունի 7-րդ և 8-րդ կետեր, հավանաբար պետք է լինի ... 2-րդ մասի ...:
- 20) **Հոդված 23-րդ 1-ին մաս** – Հարց է առաջանում, իսկ այդ հրապարակումը պետք է լինի վճարովի, թե՞ անվճար, թե՞ մեկը, թե՞ մյուսը պետք է այդ մասին անպայման նշվի: Իսկ մարզերում գործող հասարակական կազմակերպություններն ինչպե՞ս են հրապարակելու, եթե նրանց զգալի մասը չունի տեխնիկական գիտելիքներ և հնարավորություններ, սա նրանց համար ավելորդ բեռ է լինելու: Միննույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ եթե հասարակական կազմակերպությունն ունի պաշտոնական կայք, ապա նա, առանց պարտավորության, հրապարակում է պահանջվող տեղեկատվությունն հենց իր կայքում, կարիք չկա, որ նա այդ նույն գործողությունը կատարի նաև azdarar.am կայքում:
- 21) **Հոդված 23-րդ 2-րդ մաս** – *«Եթե Կազմակերպությունն ունի պաշտոնական ինտերնետային կայք, ապա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը հրապարակում է նաև այդ կայքում»:* Առաջարկում ենք հանել «նաև» բառը, ավելորդ բեռ է դրվում հասարակական կազմակերպությունների վրա: Բացի այդ, համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ տեղեկատվություն փնտրողը կոնկրետ կազմակերպության պաշտոնական կայքն է այցելում իրեն հուզող կամ փնտրող տեղեկատվությունը ստանալու համար, մեր հասարակության շատ քիչ տոկոսն է ծանոթ azdarar.am կայքին, մեծամասնությունն այցելում է կազմակերպությունների կայքեր: Բացի այդ «azdarar»-ը հայերեն իմաստ ունի, իսկ կայքն էլ միայն հայերեն է, իսկ հասարակական կազմակերպությունների մեծ մասի պաշտոնական կայքերն ունեն մեկից ավելի լեզվով ընթերցելու և ներբեռնելու հնարավորություն: Հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն պաշտոնական կայքեր, ապա այդ տեղեկատվությունը պետք է հրապարակեն միայն իրենց կայքում:

- 22) Հոդված 25-րդ 2-րդ մաս - *«Անկախ աուդիտորի եզրակացությունը հրապարակվում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով»*: Անկախ աուդիտի եզրակացությունը հնարավոր է շատ ծավալուն լինի, այն անհնար կլինի հրապարակել, առաջարկում ենք՝ հրապարակել աուդիտի միայն եզրակացության հատվածը (ներածական և եզրափակիչ մասերը): Չնայած, պետք է հաշվի առնել, որ հասարակական կազմակերպությունները ևս ունենում են առևտրային և բանկային գաղտնիքներ, առավել ևս, երբ նրանք արդեն իրավունք են ձեռք բերում անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:
- 23) Հոդված 26-րդ 2-րդ և 3-րդ մասեր - «տեղություններ» բառի փոխարեն նշել «նախազգուշացում»: Իսկ «...նախատեսված պատասխանատվության միջոցները» փակագծերը պետք է բացել, որոնք են դրանք՝ տույժ, տուգանք...այլ:
- 24) Հոդված 28-րդ 2-րդ մաս - «...31-րդ հոդվածի 1-ին մաս...», ուղղել, քանի որ 31-րդ հոդվածը վերաբերում է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետին:
- 25) Հոդված 30-րդ 1-ին մաս, 1-ին ենթակետ, 2-րդ ենթակետ - *«Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի երկու կամ ավելի կամ կոպիտ խախտումներ, կամ մեկ տարվա ընթացքում առնվազն երեք անգամ իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն»*: Ինչու՞ երկու, կարելի է նշել մեկից ավելի: Ի՞նչ է նշանակում «էական խախտում կամ կեղծիքներ»: Սույն հոդվածում տրվել է «կոպիտ խախտում» բառակապակցության իմաստը, իսկ «էական խախտման մասին» նշում չկա կամ պետք է հանել, կամ բացատրությունը գրել:
- 26) Հոդված 30-րդ 2-րդ մասի 2-րդ ենթակետ – Ո՞րն է համարվում «առավել խիստ միջոցը»: Իսկ ո՞վ կամ ինչպե՞ս է պարզելու, թե որ հասարակական կազմակերպությունը չի հրապարակել իր հաշվետվությունը, արդյո՞ք կան այդ ռեսուրսներն ու տեխնիկական հնարավորությունները, պետական բյուջեի միջոցներն օգտագործվելու՞ են այդ հսկայական ծավալի աշխատանքն իրականացնելու համար, եթե այո, ապա ի՞նչ չափի ծախսերի մասին է խոսքը:
- 27) Հոդված 30-րդ 2-րդ մասի 4-րդ ենթակետ – Նախադասությունը հստակ ձևակերպված չէ, անհրաժեշտ է վերախմբագրել:
- 28) Հոդված 30-րդ 3-րդ մաս – *«Լիազոր մարմնի՝ Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջը պետք է լինի պատճառաբանված»*: Միանշանակ պետք է

լինի պատճառաբանված, սակայն դրանից հետո չի նշվում, թե այն ինչպե՞ս է կայացվում, որքա՞ն ժամկետում, վարչական վարույթի շրջանակում է որոշումը կայացվում, թե՞ ոչ, հասարակական կազմակերպությունը մասնակից դարձվում է այդ որոշման կայացման գործընթացում, թե՞ ոչ, եթե ո՞չ, ապա ինչու՞, եթե այո, ապա ի՞նչ կարգով, լիազոր մարմինը որքա՞ն ժամկետում է այդ որոշման մասին տեղեկացնում կազմակերպությանը: Հասարակական կազմակերպությունը ստանալով այդ որոշումը կարո՞ղ է բողոքարկել այն վերադաս մարմին կամ դատարան, եթե այո, ապա որքա՞ն ժամկետում: Ցանկալի է առանձին գլուխ կամ հոդված սահմանել՝ հարկադիր լուծարման որոշման կայացման, բողոքարկման կարգի ու ժամկետների մասին: Ցանկալի է լուծարման գործընթացի բաժնում նախատեսել նաև լուծարվող հասարակական կազմակերպության անշարժ և շարժական գույքի ճակատագրի որոշման հարցը: Օրենքի նախագծում այդ մասին ընդհանրապես խոսք չկա:

29) **Հոդված 31-րդ** – Անցումային դրույթներում չի նշվում արդյո՞ք նոր օրենքի ընդունումից հետո արդեն իսկ գրանցված հասարակական կազմակերպությունները վերագրանցվելու են, թե՞ ոչ, եթե այո, ապա որքա՞ն ժամկետում: Մեր կարծիքով, ցանկալի է այս գործընթացն իրականացնել աստիճանական և անվճար, բայց անպայման այդ մասին նշել օրենքի անցումային դրույթներում:

Ակնկալում ենք ստանալ նաև Ձեր պարզաբանումները սույն առաջարկությունների վերաբերյալ:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Գործադիր տնօրեն